ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՍԱՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՐԱՏԻ

ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՎՈՒՇ ԵՎ ՁԱԿԱՄ ԳԱՎԱՌՆԵՐԸ XVII Դ. – XVIII Դ. ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

(պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Շահնազարյան Արտաշես Իվանի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Եղիազարյան Արման Սամվելի

պատմական գիտությունների թեկնածու Մալոյան Արման Մանուկի

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հոկտեմբերի 11-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. սեպտեմբերի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Ղ. Մուրադյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ատենախոսությունը նվիրված է հյուսիսարևելյան Հայաստանի Տավուշ և Զակամ գավառների XVII դ. – XVIII դ. առաջին քառորդի պատմությանն ու ժողովրդագրությանը: Թեման կարևորվում է այն առումով, որ քննվող ժամանակաշրջանի պատմական իրադարձություններն ու ժողովրդագրական տեղաշարժերն իրենց ազդեցությամբ ու հետևանքներով սերտորեն կապված են նորագույն շրջանի մի շարք կարևոր իրողությունների հետ:

Հյուսիսարևելյան Հայաստանում բնակչության կազմի փոփոխությունները սկսվել էին դեռևս նախընթաց դարերից՝ այնտեղ թյուրքական զանազան քոչվոր ցեղերի ներթափանցման հետևանքով: Այդ գործընթացները շարունակվել են մոնղոլների, ինչպես նաև կարա-կոյունլու ու ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետությունների շրջանում[1]: Թյուրքերի վերջին խոշոր ներհոսքը դեպի քննվող գավառներ կատարվեց XVI–XVII դդ., երբ Սեֆյան Իրանի որոշ շահերի հովանավորությամբ տարածաշրջանը բնակեցվեց նորանոր քոչվոր ցեղերով: Ստանալով զանազան արտոնություններ ու տիրույթներ, այս ցեղերը հայտնվեցին խիստ շահեկան իրավիճակում: Փոխարենը տեղաբնիկ հայ բնակչությունը ստիպված էր ապավինել ավելի բարձրադիր շրջաններին: Ցածրադիր վայրերի հայկական բնակավայրերը հետզհետե անկում ապրեցին և տասնամյակների ընթացքում լքվելով՝ յուրացվեցին եկվոր թյուրքերի կողմից: Ուստի կարող ենք արձանագրել, որ նշված գործընթացները որոշ առումներով հետագայում պայմանավորեցին հայ-ադրբեջանական այժմյան սահմանի այդ հատվածը:

Տավուշ և Զակամ գավառների ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրությունը խիստ արդիական է հատկապես մեր օրերում, երբ հարևան Ադրբեջանը պետական մակարդակով հետևողականորեն փորձում է սեփականել խնդրո առարկա տարածաշրջանի պատմությունը: Հյուսիսարևելյան Հայաստանը ներկայացվում է որպես եկվոր ադրբեջանցիների պատմական հայրենիք, իսկ տեղաբնիկ հայերը համարվում են XIX դ. Ռուսաստանի կողմից այնտեղ բնակեցված եկվոր ժողովուրդ: Հատկապես վերջին տարիներին հրատարակված գրքերում ադրբեջանցի հեղինակները խեղաթյուրելով ու կամայականորեն մեկնաբանելով անհերքելի պատմական փաստերը՝ պատմաշինարարության նոր «բարձունքներ» են նվաճում՝ շարունակելով իրենց պատմագիտության տխուր ավանդույթները[2]: Այս ամենին զուգահեռ՝ ադրբեջանական հայատյաց իշխանություններն այժմ իրենց վերահսկողության տակ գտնվող հայկական տարածքներում միտումնավոր վերացնում են հայոց նյութական մշակութային ժառանգությունը՝ ձգտելով վերացնել դրանց հայկականության ամեն մի ապացույց:

---

[1] Տե՛ս Հ. Մարգարյան, Նշանավոր իշխանական տները Հայաստանում ԺԲ դարից – ԺԴ դարի առաջին կեսին, Երևան, 2023, էջ 18–19:

[2] Տե՛ս Şəmşəddil nahiyəsinin Kameral təsviri. 1860-ci il (Tərcümə, tərtib, ön söz və qeydlərin müəllifi Nazir Əhmədli). Baki, 2019: Տե՛ս Gəncə-Qarabağ əyalətinin icmal dəftəri, Layihənin rəhbəri və ön sözün müəllifi: Yaqub Mahmudov, Baki, 2010: Տե՛ս Kadim Vatan Karabağ, Divan Kitap, Editörler: K. Yerdelen, A. Yalçinkaya, İ. Memmedova, Baski, 2022: Տե՛ս Я. Махмудов, Т. Мустафазаде և ուրիշներ, Иреванское Ханство, Российское завоевание и переселение армян на земли Северного Азербайджана, Баку, 2010:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը XVII դ.- XVIII դ. առաջին քառորդ ընկած ժամանակահատվածում Տավուշ և Զակամ գավառների պատմության ու ժողովրդագրության համակողմանի հետազոտությունն է: Այդ համատեքստում մանրամասն քննվում են այդ գավառներում ժողովրդագրական պատկերի փոփոխությունները, վեր հանվում դրանք պայմանավորող հիմնական գործոնները: Այս շրջանակում մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

1. ինչպիսի՞ն էին պարսկա-օսմանյան պատերազմների հետևանքները Տավուշ և Զակամ գավառներում,

2. հյուսիսարևելյան Հայաստանը շահ Աբասի իրականացրած լայնամասշտաբ բռնագաղթին ենթարկվեց, թե ոչ,

3. պարսկա-օսմանյան խաղաղության տևական շրջանն ինչպիսի՞ դրական ազդեցություն ունեցավ տարածաշրջանում և ո՞րոնք էին այն նպաստավոր գործոնները, որոնցով պայմանավորված այդ գավառներում հոգևոր-մշակութային ու տնտեսական կյանքը վերելք ապրեցին ու ձևավորվեցին հայկական մելիքություններ,

4. Սեֆյանների օրոք XVI–XVII դդ. ի՞նչ նոր ցեղեր հայտնվեցին այդ գավառներում և ինչպե՞ս փոխեցին դրանց էթնիկ դիմագիծը,

5. XVIII դարասկզբին Իրանի թուլացմամբ պայմանավորված լեզգիների արշավանքները, ապա դրանց հաջորդած թուրքական նվաճումն ինչպե՞ս անդրադարձան Տավուշ և Զակամ գավառների վրա,

6. ինչպիսին էր Տավուշ և Զակամ գավառների էթնո-տնտեսական պատկերն ըստ օսմանյան 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ի: Ո՞րոնք էին հայ բնակչության զբաղեցրած տարածքները և ի՞նչ քոչվոր ցեղեր էին հայտնվել այդ գավառներում:

Թեմայի տարածական ու ժամանակագրական ընդգրկումը: Ատենախոսության տարածական ընդգրկումը ներառում է հյուսիսարևելյան Հայաստանի Զակամ և Տավուշ գավառները: Տավուշը միջնադարյան Հայաստանի հայտնի գավառներից էր, որը Տուչքատակ (որոշ ձեռագրերում՝ Տուչկատակ, Թուչկատակ և այլն) անվամբ որպես Մեծ Հայքի Ուտիք նահանգի հինգերորդ գավառ վկայված է «Աշխարհացոյց»-ում[3]: Ինչ վերաբերվում է Զակամին՝ ապա այն ավելի ուշ ձևավորված միավոր է: Զակամ (Զագամ, Զաքամ, Ձագամ, Ձեգամ, Սագիմ) գավառանունն առաջին անգամ հիշատակում է XIII դ. հեղինակ Վարդան Վարդապետը[4]: Այս գավառները համապատասխանում են իրար զուգահեռ հոսող Տավուշ և Զակամ գետերի ավազաններին: Տավուշ գավառի տարածքի մի մասն այժմ գտնվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի կազմում և ներառված է Բերդ խոշորացված համայնքի մեջ: Տավուշի մի զգալի մասն էլ Ադրբեջանի Հանրապետության (ԱՀ) Թովուզի շրջանի մաս է կազմում: Զակամի տարածքն ամբողջովին գտնվում է ԱՀ տարածքում և վերջինիս Գետաբեկի, Շամքորի ու Թովուզի շրջանների մաս է կազմում:

---

[3] Տե՛ս Մովսես Խորենացի, Աշխարհացոյց, Մատենագիրք հայոց, (ՄՀ), հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2153:

[4] Տե՛ս Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, Բարիզ, 1960, էջ 11–13:

Ատենախոսությունը, ինչպես նշվեց, ժամանակագրորեն ընդգրկում է առավել քիչ ուսումնասիրված՝ XVII դ. - XVIII դ. առաջին քառորդ ընկած ժամանակահատվածը: Ժամանակագրական ներքին շեմը համապատասխանում է XVII դ. առաջին տասնամյակում հյուսիսարևելյան Հայաստանը վերստին Սեֆյան Իրանին անցնելուն: Ի տարբերություն նախորդ շրջանի, երբ տարածաշրջանը ձեռքից ձեռք էր անցնում, այս անգամ ավելի քան 100 տարի Տավուշն ու Զակամը մնացին Սեֆյանների տիրապետության տակ: Ատենախոսության ժամանակագրական վերին սահմանը XVIII դ. առաջին քառորդի վերջն է, երբ օգտվելով Իրանի թուլությունից՝ 1725 թ. Օսմանյան Թուրքիային հաջողվում է նվաճել ամբողջ Արևելյան Հայաստանը:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ատենախոսությունը շարադրված է տարալեզու, գրչագիր ու վիմագիր, տպագիր և անտիպ սկզբնաղբյուրների, արխիվային վավերագրերի և մասնագիտական գրականության համադիր քննությամբ: Նշված սկզբնաղբյուրները վերլուծելիս կիրառել ենք պատմավերլուծական, պատմաքննական, պատմահամեմատական և համադրման մեթոդներ: Նկարագրական մեթոդի միջոցով ներկայացվել են Տավուշ և Զակամ գավառներում ռազմաքաղաքական ու դրանից բխող ժողովրդագրական գործընթացները: Բնակչության թվաքանակի մոտավոր հաշվարկման ընթացքում կիրառել ենք վիճակագրական ու բնակչության վերակազմման մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Տավուշ և Զակամ գավառների XVII դ. - XVIII դ. առաջին քառորդի պատմությունը հայ պատմագիտության մեջ գրեթե չուսումնասիրված թեմաներից է: Ատենախոսության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել դեռևս չհրատարակված հայալեզու և այլալզու սկզբնաղբյուրներ: Առաջին անգամ հայերեն են թարգմանվել մինչ օրս հայագիտությանն անծանոթ արժեքավոր օսմանյան վավերագրեր, որոնք հնարավորություն են տալիս նոր լույսի ներքո լուսաբանել նշված գավառներում քննվող ժամանակաշրջանի պատմաժողովրդագրական գործընթացները: Նշված սկբնաղբյուրների համադիր վերլուծությունը թույլ է տալիս հստակեցնել, հերքել կամ հաստատել մինչ այժմ կատարված որոշ դիտարկումներ:

Ուսումնասիրության գիտական նորույթը հետևյալն է.

1. մանրամասն ներկայացվել և վերլուծվել է պարսկա-օսմանյան պատերազմների ազդեցությունը նշված գավառներում,
2. տարաբնույթ սկզբնաղբյուրների համադրությամբ ու վերլուծությամբ հիմնավորվել է այդ գավառների՝ շահաբասյան բռնագաղթից հիմնականում զերծ մնալը,
3. ներկայացվել են քննվող ժամանակահատվածում Տավուշ և Զակամ գավառների ժողովրդագրության վար ազդող հիմնական գործոնները,
4. բացահայտվել է համեմատաբար խաղաղ շրջանում այդ գավառներում առաջացած հայկական ինքնավարությունների՝ մելիքությունների գոյությունը,
5. լուսաբանվել է ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը զուգընթաց այդ գավառներում հոգևոր մշակութային կյանքի ակտիվացումը, եկեղեցաշինությունը,
6. ներկայացվել է Տավուշ և Զակամ գավառների ձեռագրական ժառանգությունը, միաժամանակ կատարվել են որոշ ձեռագրագիտական ճշգրտումներ,
7. բացահայտվել է Տավուշ և Զակամ գավառների՝ լեզգիական արշավանքների պատճառով մասամբ հայաթափվելու իրողությունը,

8. հայերենով գիտական շրջանառության մեջ են դրվել 1727 Օսմանյան Թուրքիայի իրականացրած աշխարհագրի տվյալները,

9. առկա տվյալների մանրազնին քննությամբ ցույց է տրվել Տավուշի և Զակամի բարձրադիր շրջանների բացառապես հայաբնակ լինելու փաստը,

10. կատարվել են մի շարք տեղորոշումներ ու տեղագրական ճշգրտումներ,

11. ուրվագծվել է Տավուշի ու Զակամի քննվող ժամանակաշրջանի տնտեսական ընդհանուր դրությունը:

Կիրառական նշանակությունը: Ուսումնասիրության մեջ օգտագործված մեթոդաբանությունը կարող է օգտակար լինել Հայաստանի այս կամ այն գավառին վերաբերվող լոկալ պատմության գիտակարգին վերաբերող հետազոտությունների համար: Աշխատանքում առաջ քաշված դրույթները, եզրահանգումները, ժողովրդագրական գործընթացների վերլուծությունը կնպաստեն Հայաստանի խնդրո առարկա պատմաշրջանին վերաբերող մի շարք հարցերի լուսաբանմանը:

Ադրբեջանի վերահսկողության տակ անցած ու հետագայում հայաթափված բնակավայրերի պարագայում հետազոտության արդյունքերն անհարքելի փաստեր են՝ մերկացնելու ադրբեջանական պատմագիտության հակագիտական հորինվածքները:

Հստակեցվում են ՀՀ մաս կազմող Բերդ խոշորացված համայնքի բնակավայրերի պատմությանն ու ժողովրդագրությանն առնչվող մի շարք հարցեր:

Առկա հետազոտության տվյալները օգտակար կարող են լինել Տավուշ և Զակամ գավառների քննվող ժամանակաշրջանի տնտեսական կյանքի, ինչպես նաև հայկական գավառների առօրեականության պատմության ուսումնասիրման տեսանկյունից:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը, հիմնահարցի ուսումնասիրվածությունը: Որպես Հայաստանի հյուսիս-արևելքի եզերական գավառներ՝ Տավուշն ու Զակամը որոշ առումներով դուրս են գտնվել ժամանակի պատմիչների տեսադաշտից: Այդուհանդերձ, Առաքել Դավրիժեցու երկը[5] հնարավորություն է տալիս պարզաբանելու այդ գավառների՝ շահաբասյան բռնագաղթից հիմնականում զերծ մնալու հանգամանքը: Զաքարիա Քանաքեռցու[6] աշխատությունն էլ ընդհանուր պատկերացում է տալիս պարսկա-օսմանյան պատերազմներին հաջորդած խաղաղության շրջանի վերաբերյալ: XVIII դ. առաջին քառորդի քաղաքական անցուդարձի, ինչպես նաև լեզգիների ավերիչ արշավանքների վերաբերյալ օգտակար է հայ Աղվանից (Գանձասարի) կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի երկը[7]: Սեֆյան Իրանի վարչական կառուցվածքի և հյուսիսարևելյան Հայաստանում հայտնված թյուրքական քոչվոր ցեղերի մասին եզակի վկայություններ կան Սեֆյանների պալատական պատմագիր Իսկանդեր Մունշիի[8] երկում: Սեֆյան Իրանի վարչական ու հարկային քաղաքականության

[5] Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Երևան, 1990 (հետայսու՝ Առաքել Դավրիժեցի):

[6] Տե՛ս Զաքարիա Քանաքեռցի, Պատմութիւն, աշխատասիրությամբ Ա. Վիրաբյանի, Երևան 2015:

[7] Տե՛ս Աղուանից կաթողիկոս Տ. Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Ստեփանակերտ, 2007:

[8] Տե՛ս Eskandar Beg Monshi, History of Shah Abbas the Great, vol. 1, 2, Boulder, Colorado, 1978.

լուսաբանման առումով կարևորագույն աղբյուր է «Թազքիրաթ ալ-մուլուք» (Արքաների հիշատակարան) վավերագիրը[9]:

Դրա հետ մեկտեղ՝ ատենախոսության սկզբնաղբյուրային հենքի մեծ բաժինն են կազմում Տավուշի և Զակամի գրչօջախներում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարանները՝ տպագրված ու անտիպ[10]:

Մեծ նշանակություն ունեն նաև թուրքական ու վրացական աղբյուրները, առանց որոնց անհնար կլիներ քննված մի շարք հարցերի հստակեցումը[11]: Թուրքական աղբյուրներից կարևորագույն նշանակություն ունեն 1593 թ Գանձակ-Ղարաբաղի էյալեթի համառոտ[12] և 1727 թ. ընդարձակ դաֆթարները[13]: Դրանք հնարավորություն են ընձեռում քննելու Տավուշի ու Զակամի այդ ժամանակների էթնոկրոնական կազմը, հայերի ու թյուրքական նորեկ ցեղերի բնակության շրջանները, մեզ հետաքրքրող գավառների վարչական բաժանումը, գանձվող հարկերի չափն ու դրանց տնտեսական ընդհանուր դրությունը:

Տավուշ և Զակամ գավառների այդ ժամանակաշրջանին վերաբերող վիմագրերի քննությունն էլ ավելի են հարստացնում աշխատանքը: Մեծ նշանակություն ունեն Քաջիկյանի կողմից Թիֆլիսի «Արձագանք» պարբերականում հրատարակած «Ճանապարհորդական հիշատակարան»-ի տվյալները[14]: Հեղինակը մանրամասն նկարագրել է տարածաշրջանի հուշարձանները, ներկայացրել դրանց արձանագրությունները, ինչպես նաև տեղերում պահվող ձեռագրերի

---

[9] Տե՛ս Միրզա Սամի'ա, Թազքիրաթ ալ-մուլուք (Արքաների հիշատակարան), թարգմանությունը և ծանոթագրությունը՝ Ք. Կոստիկյանի և Ժ. Մեշքանբարյանսի, Երևան, 2019: Հմմտ. Tadhkirat Al-Muluk, a manual of Safavid Administration, translated and explained by V. Minorsky, London, 1943:

[10] Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974: Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621–1640 թթ.), հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978: Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, (1641–1660 թթ.), հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1984: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1984: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Գ, կազմեց Օ. Եգանեան, Երևան, 2007: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, խմբագրութեամբ Գ. Տէր-Վարդանեանի, հ. Թ, Երեւան, 2017: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (հետայսու՝ ՄՄ) ձեռ. № 365, № 3813, № 6705, № 6822, № 7501:

[11] Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Սաֆրաստյան, Երևան, 1961: Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, կազմեց Ա. Սաֆրաստյան, Երևան, 1964: В. Багратиони, История царства Грузинского, Тбилиси, 1976: Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ (ԺԸ–ԺԹ դդ.), Երևան, 1955:

[12] Տե՛ս T.C. Cumhurbaşkanliği Devlet Arşivleri Başkanliği Osmanli Arşivleri, Gence-Karabağ eyaleti icmal defteri, Başbakanlik Arşivi, Tapu-Tahrir defteri, N: 699.

[13] Տե՛ս T.C. Cumhurbaşkanliği Devlet Arşivleri Başkanliği Osmanli Arşivleri, TT_d, sira nu: 903, Tapu Tahrir Defteri:

[14] Տե՛ս Քաջիկեան, Ճանապարհորդական յիշատակարան, «Արձագանք», № 7, Թիֆլիս, 1888, էջ 86–90:

հիշատակարանները: Նույնաբովանդակ ու ավելի ընդգրկուն տվյալներ է հաղորդում նաև Մակար Բարխուդարյանցը[15]:

Չնայած հյուսիսարևելյան Հայաստանի միջնադարյան պատմության որոշ հարցեր գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում[16], այնուամենայնիվ Տավուշի ու Զակամի քննվող ժամանակաշրջանին վերաբերող որևէ ուսումնասիրություն հրապարակում առկա չէ: Այդ գավառների վերաբերյալ տեղագրական պրպտումներ են կատարել Ղուկաս Ինճիճյանն ու Ղևոնդ Ալիշանը: Մեծ արժեք ունի Սամվել Կարապետյանի աշխատությունը[17]: Շրջելով հյուսիսարևելյան Հայաստանի՝ այժմ ԱՀ կազմում գտնվող նաև խնդրո առարկա շրջաններում, նա ընթերցողին է հասցրել հարյուրավոր արձանագրությունների վերծանումներ ու հուշարձանների հատակագծեր, որոնք հետագայում միտումնավոր ոչնչացվել կամ եղծվել են: Հեղինակը կատարել է նաև կարևոր աշխատանք՝ փորձելով տեղորոշել աղբյուրներում հիշատակվող, բայց հետագայում ավերված ու լքված մի շարք բնակավայրեր: Տավուշ գավառի պատմության առանձին հարցերի անդրադարձել է Ռուբեն Սիմոնյանը[18]: Հյուսիսարևելյան Հայաստանի գրչության կենտրոններին նվիրված իր աշխատության մեջ Թամարա Մինասյանը թռուցիկ անդրադարձ է կատարել նաև Տավուշ ու Զակամ գավառների պատմության որոշ հարցերի[19]:

Քանի որ քննվող ժամանահատվածում հյուսիսարևելյան Հայաստանն ընդգրկված էր Սեֆյան Իրանի կազմում, այդ պետության վարչական կառուցվածքի, քաղաքական ու տնտեսական դրության վերաբերյալ ուսումնասիրությունները կարևոր նշանակություն ունեն ատենախոսության շարադրման համար: Այդ առումով կարելի է առանձնացնել Ռուդի Մաթթիի[20] աշխատությունները: Նշանակալի է նաև Իլյա Պետրուշևսկու[21]

---

[15] Տե՛ս Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Երևան, 1999, (հետայսու՝ Բարխուտարեանց):

[16] Զաքարյանների կրտսեր ճյուղ Վահրամյանների շրջանի պատմությանը հանգամանորեն անդրադարձել է Արտաշես Շահնազարյանը: Տե՛ս Ա. Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990: Հեղինակը նաև առանձին հոդվածներով անդրադարձել է հյուսիսարևելյան Հայաստանի միջնադարյան պատմության տարբեր հարցերի: Տե՛ս օրինակ Տավուշի Կյուրիկյան իշխանությունների պատմությունից, «Էջմիածին», 2017, № Ժ, էջ 106–130: Նույնի՝ Գարդման գավառի պատմությունից, «Հայոց պատմության հարցեր» 2022, հ. 25, էջ 42–60: Ռաֆայել Մաթևոսյանը Լոռու Կյուրիկյանների պատմության համատեքստում անդրադարձ է կատարել նաև նրանց՝ Տավուշում հաստատված ճյուղին: Տե՛ս Ռ. Մաթևոսյան, Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1968, № 3, էջ 199–208:

[17] Տե՛ս Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, Երևան, 2004:

[18] Տե՛ս Ռ. Սիմոնյան, Տավուշի մարզ, Երևան, 2012:

[19] Տե՛ս Թ. Մինասյան, Ուտիքի գրչության կենտրոնները, Երևան, 2020:

[20] Տե՛ս R. Matthee, Persia in Crisis, Safavid Decline and the Fall of Isfahan, Chapter 4, Monetary Policy and the Disappearing Mints, 1600–1700, London, 2012: Նույնի՝ The Politics of Trade in Safavid Iran: Silk for Silver, 1600–1730, Cambridge, 1999: Նույնի՝ Relations Between the Center and the Periphery in Safavid Iran, The Historian, vol. 77, № 3, (2015) Published By: Taylor & Francis, էջ 431–463: Նույնի՝ Was Safavid Iran an Empire?, Journal of the Economic and Social History of the Orient, Published by Brill, № 53 (2010), էջ 33–265: Նույնի՝ The Ottoman-Safavid War of 986–998/1578–90: Motives and Causes, International Journal of Turkish Studies, 2014, vol. 20, էջ 2–20: Նույնի՝ Safavid Iran and the "Turkish

մենագրությունը, որտեղ ի թիվս այլ հարցերի՝ հեղինակը քննում է թյուրքական տարբեր ցեղերի՝ Հայաստանի տարբեր շրջաններում հայտնվելու պատճառներն ու ժամանակը: Նմանատիպ ուսումնասիրությունների շարքում արժեքավոր են Լեոյի[22], Հակոբ Փափազյանի[23], Մանվել Զուլալյանի, Արամ Սաֆրաստյանի[24], Հուսիկ Նաջարյանի[25], Քրիստինե Կոստիկյանի[26], Արտակ Մաղալյանի[27] գործերը: Այդ ժամանակի հայ բնակչության թվի մոտավոր հաշվարկման առումով կարևոր են Աշոտ Մելքոնյանի[28], Գոռ Երանյանի[29] և Միքայել Մալխասյանի[30] հետազոտությունները:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Աշխատանքի հիմնական արդյունքներն ու դրույթները տեղ են գտել հրատարակված վեց հոդվածներում: Ատենախոսության հիմնադրույթների զգալի մասը փորձաքննություն է անցել հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության են երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի և Նոր դարերի պատմության բաժինները:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և տարածքային

---

question" or How to Avoid a War on Multiple Fronts, Iranian Studies, 2019, vol. 52, № 3–4, էջ 513–542:

[21] Տե՛ս И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949.

[22] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. III, գիրք I, Երևան, 1969: Նույնի՝ Հայոց պատմություն, հ. III, գիրք II, Երևան, 1973:

[23] Տե՛ս Հ. Փափազյան, Հոդվածներ, հ. Ա, Բ, Երևան 2020:

[24] Տե՛ս Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, (XVI–XVII դդ. կանուննամեներ), թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Զուլալյանի, Երևան, 1964: Մ. Զուլալյան, Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1500–1555 թթ.), «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1959, № 3, էջ 49–60: Նույնի՝ Հայաստանը թուրք-իրանական պատերազմների ժամանակաշրջանում, Հայոց պատմություն, հ. II, գիրք երկրորդ, Երևան, 2014: Նույնի՝ Հայ ժողովրդի XIII–XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990:

[25] Տե՛ս Հ. Նաջարյան, XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և հայերի տարագրությունը, Երևան, 1959: Նույնի՝ Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961:

[26] Տե՛ս Ք. Կոստիկյան, Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 2005, հ. XXIV:

[27] Տե՛ս Ա. Մաղալյան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, 2007:

[28] Տե՛ս Ա. Մելքոնյան, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն) Երևան, 1994:

[29] Տե՛ս Գ. Երանյան, Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակն ըստ XV դ. ձեռագրերի հիշատակարանների, (Վասպուրականի օրինակով), Երևան, 2015:

[30] Տե՛ս Մ. Մալխասյան, Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դ. առաջին կեսին, «Հայագիտության հարցեր», 2016, 1 (7), էջ 94–104:

ընդգրկումը, մեթոդաբանությունը, գիտական նորույթը, ինչպես նաև քննվում է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին գլուխը կրում է **«ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI Դ. ՎԵՐՋԻՆ XVII Դ. ՍԿԶԲՆԵՐԻՆ»** խորագիրը, որը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ ***«XVI դ. պարսկա-թուրքական ռազմական գործողությունների հետևանքները հյուսիսարևելյան Հայաստանում»,*** ամփոփ ներկայացված է XVI դ. պարսկա-թուրքական ռազմական գործողությունները և դրանց ազդեցությունը հյուսիսարևելյան Հայաստանի գավառների վրա: Անդրադարձ է կատարվել ուսումնասիրվող շրջանների վարչական բաժանումներին:

Երկրորդ՝ ***«Տավուշ և Զակամ գավառները շահաբասյան բռնագաղթի տարիներին»*** ենթագլխում քննության է առնվել շահաբասյան բռնագաղթին Տավուշ և Զակամ գավառների ենթարկված լինել-չլինելու խնդիրը: Վերլուծելով առկա սկզբնաղբյուրների տվյալները՝ հանգել ենք այն եզրակացության, որ կրելով ռազմական գործողությունների ծանրությունները այնուամենայնիվ հյուսիսարևելյան Հայաստանի գավառները մեծամասամբ զերծ են մնացել շահաբասյան բնագաղթից: Չնայած դրան՝ որոշ ուսումնասիրողներ թյուրիմացաբար այս տարածաշրջանը ներառում են շահաբասյան բռնագաղթից տուժած գավառների շարքում[31], սակայն նման պնդումներն աղբյուրագիտական նյութերով չեն հաստատվում: Այդ գավառներից բռնագաղթի մասին վկայություններն ավելի ուշ՝ հիմնականում բանավոր փոխանցված տեղեկություններ են, որոնց համաձայն՝ այս կամ այն բնակավայրի հայաթափումն ավանդաբար կապվում է շահ Աբասի բռնագաղթի հետ[32]:

Հաջորդ՝ ***«Օտար էթնիկ տարրի բնակեցումը հյուսիսարևելյան Հայաստանում»*** ենթագլխում ներկայացվում են հյուսիսարևելյան Հայաստանում Սեֆյանների օրոք հաստատված ցեղերն ու դրանց տեղաբաշխվածությունը: Սեֆյան պետությունում նահանգների ու գավառների կառավարումը հանձնվում էր ցեղապետերին՝ ըստ տարածքի սահմանների ու եկամտաբերության: Սովորաբար պաշտոնի անցնելով՝ այդ տարածքները նրանք ստանում էին որպես ժառանգական տիրույթ՝ օլքա[33]: Սեֆյանների կողմից մի շարք ցեղապետեր պաշտոն և օլքա ստացան Հայաստանի տարածքում և իրենց ցեղերով հաստատվեցին այդտեղ[34]: Այս ամենի հետևանքով նշված տարածքների ժողովրդագրական պատկերը սկսեց արագորեն փոփոխվել:

Սեֆյանների օրոք Տավուշին հարակից Աղստևի ստորին հոսանքը որպես օլքա հանձնված էր ղազախլու ցեղին: Այս ցեղի առաջնորդները, պարսկա-օսմանյան

---

[31] Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, 2008, էջ 51, հմմտ. Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), Երևան, 2005, 2006, էջ 89: Տե՛ս Ա. Տեր-Գրիգորյան, Տավուշ (Շամշադին), Երևան, 2013, էջ 61:

[32] Տե՛ս Բարխուտարեանց, էջ 329: Տե՛ս Գ. Ղարախանյան, Չինարին նոր հազարամյակի սկզբին, Երևան, 2005, էջ 13:

[33] Օլքա թուրքերենից բառացի թարգմանաբար նշանակում է «երկիր»: Տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պ. առաջին (ԺԵ–ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Երևան, 1956, էջ 123:

[34] Տե՛ս Հ. Փափազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Արևելյան Հայաստանում XVI–XVIII դարերում, հոդվածներ, հ. Ա, Երևան, 2020, էջ 379:

պատերազմների վճռորոշ պահերին նշմարելով հաղթողին, պարբերաբար տիրափոխ էին լինում: Չնայած դրան՝ շահ Աբասը ոչ միայն չպատժեց ղազախլուներին, այլև նրանց պարագլխին շնորհեց խանի տիտղոս: Ղազախլուները շարունակեցին տիրել Աղստևի ստորին հովտին՝ հետզհետե ավելի ընդլայնելով իրենց տիրույթները: Տավուշի հարևանությամբ հաստատված այդ ցեղը, որը պարբերաբար ասպատակում էր Վրաստանը՝ գերեվարելով նրա բնակիչներին[35], դժվար թե շրջանցեր ավելի անպաշտպան հայկական գավառները: Հետագա տարիներին Աղստևի ստորին հովիտն այդ ցեղի անունով սկսեց կոչվել Ղազախ[36]:

Հյուսիսարևելյան Հայաստանում հաստատված մյուս ցեղը զուլքադարն էր և դրա կազմում գտնվող շամսադդինլու ենթաճյուղը: Սրանք դեռևս Իսմայիլ I (1502–1524) շահի օրոք հաստատվել էին Զակամ գետի ավազանում[37]՝ սկզբնապես զբաղեցնելով դրա ստորին հատվածը: Այս ցեղը տեղափոխվել էր Փոքր Ասիայից և Սեֆյանների օրոք հաստատվեց հյուսիսարևելյան Հայաստանում[38]: Նրանց ցեղապետերից Ալիխան սուլթանը շահ Աբասի օրոք բացի Տավուշ և Զակամ գավառներում ունեցած տիրույթներից, օլքա ստացավ նաև Շիրվանում[39]: Ռազմական հաջողություններից հետո, երբ Սեֆյան զորքերը օսմանցիներից գրավում են Ախալցխա ամրոցը, Ալիխան սուլթանի հաջորդ Սելիմ խան Շամսադդինլուն տեր է դառնում նաև այդ ամրոցին[40]: Շամսադդինլուների զբաղեցրած տարածքը սկզբնապես համապատասխանում էր Գանձակից արևմուտք գտնվող տարածքներին՝ հիմնականում Տավուշից դեպի Շամքոր ընկած շրջաններին[41], այնուհետև նրանք հայտնվում են Աղստև ու Վարագաջուր գետերի ստորին հոսանքների շրջանում:

Գանձակի բեկլարբեկի ստորական լինելով հանդերձ՝ այս ցեղերի ղեկավարներն ունեին տիրույթներն ու իշխանությունը ժառանգաբար փոխանցելու արտոնություն[42]: Քոչվոր այս ցեղերի համար ստեղծված նման բարենպաստ պայմանները հանգեցրին նրան, որ տարածաշրջանի՝ հիմնականում հարթավայրային շրջանները բնակեցվեն մահմեդական բնակչությամբ: Զբաղեցնելով Կուր գետի շուրջ ընկած ցածրադիր վայրերը՝ ամռան ամիսներին քոչվոր այդ ցեղերը բարձրանում էին Միափորի ու Գարդմանի լեռներ՝ օգտվելով տեղի արոտավայրերից:

---

[35] Տե՛ս Eskandar beg Monshi, vol II, p. 1066.

[36] Տե՛ս Ж. Шарден, Путешествие Шардена по Закавказью в 1672–1673 гг., Тифлись, 1902, էջ 237–238:

[37] Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 135:

[38] Տե՛ս Бакиханов А. К., Гюлистан-и Ирам, Баку, 1991, с. 48–49.

[39] Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ. էջ 135: Հյուսիսարևելյան Հայաստան տեղափոխված ցեղերին անդրադարձել է Արշալույս Գյուրջինյանը: Հեղինակը սակայն սխալմամբ տարանջատել է զուլքադար և շամսադդինլու ցեղերը, այնինչ վերջինս զուլքադար ցեղի մի ճյուղն է: Տե՛ս Ա. Գյուրջինյան, Շամշադին (Տավուշ) պատմաշխարհագրական և կրթալուսավորական ակնարկներ, Երևան, 1989, էջ 11: Այս ցեղերի թվաքանակին անդրադառնալով Իսրայել Զանգլյանն առանց աղբյուր նշելու գրում է, որ նրանց թիվը հասնում էր 350 հազարի, որն անկասկած իրականության հետ որևէ աղերս չունի: Տե՛ս Ի. Զանգլյան, Շամշադին, Երևան, 2011, էջ 64:

[40] Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ. էջ 135:

[41] Տե՛ս Gəncə-Qarabağ əyalətinin icmal dəftəri, էջ 10:

[42] Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 101.

Ատենախոսության երկրորդ՝ **«ՏԱՎՈՒՇ ԵՎ ՋԱԿԱՄ ԳԱՎԱՌՆԵՐԸ (1606-1725)»** գլուխը բաժանված է երեք ենթագլուխների: Առաջին ենթագլխում՝ ***«Տավուշի և Ջակամի մելիքությունները (1606–1725)»*** ներկայացված է պարսկա-օսմանյան երկարատև հաշտության հաստատումը, այդ գավառների՝ վերստին Սեֆյան Իրանին անցնելը: Այնուհետև առկա աղբյուրագիտական նյութի համակողմանի քննությամբ ներկայացված են այդ գավառներում ստեղծված հայկական մելիքությունները:

Տավուշ գավառում XVII դ. սկզբում գոյություն ունեցած մելիքության մասին արձանագրված է 1608 թ. ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարանում[43]: Այնուհետև՝ Տավուշի մելիքության մասին անուղղակի վկայություններ հանդիպում են Բերդի՝ 1930-ական թթ. երկրորդ կեսին հիմնահատակ ավերված եկեղեցու շինարարական արձանագրության մեջ: Արձանագրությունից պարզվում է, որ եկեղեցին կառուցվել է «...Թաւուզայ երկրիս մելիք Ղորխմազի կամակցութեամբ..»[44]:

Վերոնշյալ մելիք Ղորխմազը հիշատակվում է նաև Տավուշի Քամալ գյուղում Ավետիս քահանայի գրչագրած Ավետարանի XVIII դ. սկզբի հիշատակարանում[45]: Քամալ գյուղը տարածքով համապատասխանում է ներկայիս Բերդ խոշորացված համայնքի Նորաշեն գյուղին: Հետևաբար հիմքեր կան պնդելու, որ մելիք Ղորխմազի տիրույթները ներառել են Բերդն ու հարակից գյուղերը, որոնց ստույգ թիվն աղբյուրների չգոյությամբ պայմանավորված դժվար է նշել:

XVII դ. սկզբին անհայտ պատճառներով Վերին Ջակամի Մեծ Ղարամուրատ բնակավայրում էին հաստատվել Չաթախ գյուղի բնակիչները[46]: Վերջիններիս թվում էր նաև ոմն Աղաբաբ, որին վիճակած էր մեծ ավանդ ունենալ Մեծ Ղարամուրատի հետագա շենացման ու ծաղկման գործում: Աղաբաբի որդի Իսկանդար բեկը կնության է առել հարևան Գեղարքունիքի նշանավոր մելիք Շահնազարի դստերը[47]: Այսպիսով նաև խնամիական կապեր հաստատելով նշանավոր մելիքական տան հետ, Աղաբաբի ժառանգները փորձում էին որոշակի դիրքի ունենալ գավառում: Այս տոհմի ներկայացուցիչներից Մելիքթահիրը 1709-ով թվագրվող մի հիշատակարանում վկայված է որպես մելիք[48]:

Երկրորդ՝ ***«Ռազմաքաղաքական դրությունը հյուսիսարևելյան Հայաստանում XVII դ. վերջին - XVIII դ. սկզբին»*** ենթագլխում համակողմանի ներկայացված են տարածաշրջանում ռազմաքաղաքական վերադասավորումները, որոնք ընթանում էին Սեֆյան Իրանի թուլացմանը զուգընթաց: Անդրադարձ է կատարվել Օսմանյան

---

[43] Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1984, էջ 1229:

[44] Տե՛ս «Արձագանք», 1888, № 7, էջ 88: Արձանագրության մեջ հիշատակված Թավուզա երկիրը Տավուշի թյուրքահնչյուն տարբերակն է: Տավուշում այդ ժամանակաշրջանից հայտնի ձեռագրերի հիշատակարաններում վկայված «յերկիրս Թաւուշու», և «յերկիրս Տայուշ» տեղանվանաձևերը Տավուշի՝ այդ ժամանակներում տարածված գրության ձևերից էին:

[45] Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Բ, Երևան 2004, էջ 276:

[46] Տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, (1601–1640 թթ.), էջ 367:

[47] Մելիք Շահնազարի և նրա տոհմի մասին մանրամասն տե՛ս Ք. Կոստիկյան, Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIV, Երևան, 2005, էջ 303–329:

[48] Տե՛ս ՄՄ № 3813, 496բ:

Թուրքիայի դրդմամբ տարածաշրջանը քանիցս ասպատակած լեզգիների արշավանքներին: Հյուսիսարևելյան Հայաստանի գավառներն ասպատակելով՝ լեռնականները հասնում էին մինչև Սևանի ավազանի բնակավայրեր[49]: Բնակչության մի մասը գերեվարվելով տարվում էր ստրկության, իսկ լեռներում և այլ անվտանգ վայրերում ապաստանածները ծանր զրկանքների գնով մի կերպ գոյություն էին պահպանում: Տեղական ցեղապետերը, որոնք ի պաշտոնե պետք է պահպանեին Սեֆյան Իրանի սահմանները, անկարող գտնվեցին լեզգիների դեմ արդյունավետ դիմադրություն կազմակերպել:

Երրորդ՝ ***«Թուրքական նվաճումները Հարավային Կովկասում»*** ենթագլուխը նվիրված է Սեֆյան Իրանի անկման պայմաններում՝ Օսմանյան կայսրության նվաճումներին: Ռուսական կողմը 1724 թ. հունիսին պայմանագիր կնքեց թուրքերի հետ, որով պահպանեց միայն Իրանից նվաճած Կասպից ծովի առափնյա շրջանները, իսկ Վրաստանը, Հայաստանը և Իրանին ենթակա հյուսիսային շրջանները ճանաչեց թուրքական ազդեցության գոտի: Դրանից հետո թուրքերը ձեռնամուխ եղան նշված տարածքների գրավմանը: Օսմանյան զորքերին հաջողվեց 1725 թ. գրավել Լոռին, Աղստևի հովիտը, այնուհետև Տավուշն ու Զակամը: Զարգացնելով հաջողությունը՝ թուրքերը նույն տարվա հոկտեմբերին տիրեցին նաև Գանձակ քաղաքին[50]: Թուրքական արշավանքի ու ռազմական գործողությունների հետևանքով հյուսիսարևելյան Հայաստանի գավառների բնակչության մի զգալի մասը գերի տարվեց և որպես ստրուկ վաճառվեց Կոստանդնուպոլսում[51]:

Երրորդ գլուխը կրում է **«ՏԱՎՈՒՇ ԵՎ ԶԱԿԱՄ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆ ԸՍՏ ՕՍՄԱՆՅԱՆ 1727 Թ. «ԳԱՆՁԱԿ-ՂԱՐԱԲԱՂԻ ԷՅԱԼԵԹԻ ԸՆԴԱՐՁԱԿ ԴԱՖԹԱՐ»-Ի»** վերնագիրը[52]: Այս ծավալուն գլուխը բաժանված է տասնմեկ ենթագլուխների: Նախ մանրամասն վերլուծվում է այդ դաֆթարը որպես սկզբնաղբյուր, այնուհետև անդրադարձ կատարվում Տավուշ և Զակամ գավառները կազմող Թավուս, Ախնջի, Հասանսու, Ասրիկ[53], Թուրգանլար, Վերին Զակամ և Ներքին Զակամ նահիյեների բնակչությանն ու վճարված հարկերին: Ներկայացվում են այնտեղ հաշվառված անձանց անուններն ու վճարվող հարկերի քանակը: Առանձին ենթագլուխներով ներկայացված են նաև տարածաշրջանի մահմեդական բնակչությունը, ինչպես նաև անմարդաբնակ գյուղերը: Միևնույն ժամանակ դաֆթարում վկայված ու ոչ այդքան հայտնի բնակավայրերի պարագայում կատարվել են տեղորոշումներ:

---

[49] Տե՛ս Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, աշխատասիրությամբ Կ. Մաթեւոսյանի, Երևան, 2014, էջ 350: Տե՛ս Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 784:

[50] Տե՛ս Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից: (Ուսումնասիրություն և վավերագրեր), Երևան, 1953, էջ 114:

[51] Տե՛ս Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, հ Գ, Երևան, 1984, էջ 783: Տե՛ս Արարատ ամսագիր, 1888, № Ա, էջ 32: Տե՛ս Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 351:

[52] Բնագրի թարգմանությունն իրականացնելու համար մեր երախտագիտությունն ենք հայտնում ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Գեորգի Միրզաբեկյանին:

[53] Ասրիկ նահիյեն աշխարհագրորեն ներառում է Տավուշ գետի Ասրիկ վտակի ավազանը:

Տավուշ և Զակամ գավառները կազմող նշված 7 նահիյեներում կար 129 բնակավայր: Սրանց մեծամասնությունը՝ 72 գյուղ դատարկ ու լքված էին: Մնացած 57 գյուղերից 33-ը ունեին հայկական բնակչություն, իսկ 24-ը՝ մահմեդական: Հայկական գյուղերի հարկատուների ընդհանուր թիվը կազմում էր 693 հոգի: Մահմեդական 24 բնակավայրերում հաշվառված էին 364 հարկատուներ: Տարբեր քոչվոր ցեղերից վերոնշյալ նահիյեներում հաշվառված ոչ մշտական բնակչությունը կազմում էր 334 անձ: Հայկական բնակավայրերը միասնաբար օսմանյան գանձարան էին մուծում 586000 աքչե հարկ: Մահմեդական բնակչության վճարած հարկերը կազմում էր 539000 աքչե: Ընտանիքի միջին թվաքանակ ընդունելով 7-ը, տարածաշրջանի հայ բնակչության մոտավոր թիվը կստանանք 4851 անձ:

Հարկամատյանի՝ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներն ընդհանուր պատկերացում են տալիս Տավուշ և Զակամ գավառների ժողովրդագրական պատկերի վերաբերյալ: Պետք է ենթադրել, որ իրականում բնակչության թիվն ավելին պետք է լիներ: Անկասկած, բնակչության մի հատված մնացել էր առանց հաշվառման: Կարելի է ենթադրել, որ մի մասը փախել էր անմատչելի վայրեր, մի մասն էլ այլևայլ մեթոդներով խուսափել էր հարկահաններից: Բացի այդ, այդտեղ նոր էին ավարտվել ռազմական գործողությունները, և բնակչությունը դեռևս լիարժեք չէր վերադարձել խաղաղ կենսակերպին:

Մահմեդական բնակչություն ունեցող գյուղերը և քոչվոր բնակչությունը զբաղեցնում էին հիմնականում Վարագաջուր և Տավուշ գետերի ստորին հոսանքների շրջանները: Հյուսիսարևելյան Հայաստանի բարձրադիր գոտիներն ամբողջովին հայաբնակ էին: Մահմեդական բնակչությունը բարձրադիր գոտիներում որևէ բնակավայր չուներ: Նշված նահիյեների՝ մահմեդական բնակչություն ունեցող գյուղերի ու հաշվառված քոչվոր բնակիչների թվաքանակը միասնաբար վերցրած գրեթե հավասար էր հայ բնակչությանը: Փոխարենը, մշտական նստակյաց բնակչությունը հետևյալ հարաբերակցությամբ էր՝ 693 հայ, 364 մահմեդական:

Հայ բնակչությունից մեկ շնչի հաշվով գանձվող հարկի քանակը ավելին էր, քան մահմեդականներինը: Հայ բնակչությունից գանձվող հիմնական հարկատեսակը՝ իսփենջը կազմում էր 120 աքչե, փոխարենը մահմեդականների պարագայում դրա համարժեք բեննաք հարկատեսակը կազմում էր եռակի քիչ՝ 40 աքչե[54]: Ինչ վերաբերվում է քոչվոր կյանք վարող ցեղերի վճարած հարկերին՝ ապա դրանք աննշան թիվ էին կազմում և անհամեմատելի էին:

Ատենախոսության վերջին՝ **«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԶԱԿԱՄ ԵՎ ՏԱՎՈՒՇ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ XVII Դ. – XVIII Դ. ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ»** գլխում ներկայացվել է հոգևոր մշակութային կյանքի աշխուժացումն այդ գավառներում, քննության է առնվել ձեռագրական ժառանգությունը, ինչպես նաև եկեղեցաշինությունը:

Առաջին՝ ***«Զակամ գավառի հոգևոր մշակութային կյանքը XVII դ. – XVIII դ. առաջին քառորդին»*** և երկրորդ ***«Տավուշ գավառի հոգևոր մշակութային կյանքը XVII դ. – XVIII դ. առաջին քառորդին»*** ենթագլուխներում մանրամասն քննված են վերոնշյալ հարցերը:

---

[54] Տե՛ս Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, (XVI–XVII դդ. կանուննամեներ), էջ 121:

Հյուսիսարևելյան Հայաստանում XVII դ. ստեղծվել էին բարենպաստ պայմաններ: Պարսկա-օսմանյան տևական հաշտության շրջանում տարածաշրջանը բավականին զարգացում ապրեց: Հիմնվեցին նոր բնակավայրեր, ստվարացավ բնակչությունը: Կարգավորվեց Զակամի և Տավուշի թեմերի գործունեությունը, աշխուժացավ հոգևոր կյանքը: Բացի այդ, ժողովրդի հոգևոր պահանջները բավարարելու նպատակով հիմնադրվեցին նոր եկեղեցիներ ու վանական հաստատություններ: Այս գավառներում գրչօջախների առկայությունը վկայություն է այն բանի, որ կար բավականին տնտեսական ներուժ, քանի որ ձեռագիր մատյանների ստեղծումն ինքնին բավականին թանկ արժեր:

XVII դ. վերջից սկսված Սեֆյան Իրանի անկմանը հաջորդած լեզգիների արշավանքներն ու թուրքական նվաճումը մեծ հարված հասցրեցին նաև տարածաշրջանի հոգևոր հաստատություններին: Նախորդ դարում նորոգված, ինչպես նաև տարբեր բնակավայրերում նոր կառուցված եկեղեցիների մի մասը թալանվեց ու ավերվեց: Հայտնի է, որ լեռնականներն առանձնակի դաժանություն էին դրսևորում հոգևորականների նկատմամբ[55], ուստի կարող ենք ենթադրելել, որ չբավարարվելով եկեղեցիների կործանմամբ ու թալանով՝ լեզգիները կոտորել են նաև Տավուշի ու Զակամի հոգևորականներից շատերին:

Եզրակացություններում ամփոփվել են կատարված ուսումնասիրության արդյունքները.

1. ի տարբերություն Հայաստանի այլ շրջանների՝ Տավուշ և Զակամ գավառները հիմնականում զերծ են մնացել շահաբասյան բռնագաղթից: Ամիրգունա խանի հետախուզական արշավանքի հետևանքով հյուսիսարևելյան Հայաստանից գերեվարվել ու գաղթեցվել է Գանձակի շրջակայքի հայ բնակչության միայն մի հատվածը: Ավելին՝ որպես ապահով վայր, Զակամ գավառում XVII դ. առաջին կեսին ապաստանել են նաև Հայաստանի կենտրոնական շրջաններից հեռացած հայեր:

2. Սեֆյան գահակալների աջակցությամբ հյուսիսարևելյան Հայաստանի՝ հատկապես Վրաստանի սահմանակից տարածքներում XVI–XVII դդ. սկսեցին բնակություն հաստատել մի շարք թյուրքական ցեղեր: Տարիների ընթացքում նորամուտ այս բնակչությունը ստվարացավ՝ զբաղեցնելով ավելի բարեբեր հողերն ու արոտավայրերը: Այս ամենի հետևանքով հայ բնակչությունը հիմնականում կենտրոնացավ լեռնային անբարենպաստ վայրերում: Ընդ որում, լեռնային մարգագետիններն էլ այդ քոչվոր ցեղերի համար ծառայում էին որպես ամառային արոտավայրեր: Այս ցեղերի առաջնորդները բավականին ճկուն քաղաքականություն էին վարում: Նրանք խաղաղ պայմաններում օգտվելով Սեֆյանների շնորհած արտոնություններից՝ տեղերում փաստացի անսահմանափակ լիազորություններ ունեին: Այս ամենը սակայն նրանց չէր խանգարում, որպեսզի պարսկա-օսմանյան պատերազմական գործողությունների ընթացքում տիրափոխ լինեն՝ օժանդակելով թուրքական զորքերին: Պարսից շահերն այս դավաճանությունները հաճախ մոռացության էին մատնում, քանի որ նրանց համարում էին զսպող գործոն՝ հայ-վրացական հնարավոր ապստամբությունից:

[55] Տե՛ս «Արարատ» 1888, № Ա, էջ 30: Տե՛ս «Արձագանք» 1886, № 23, էջ 330:

3. Տավուշ և Զակամ գավառների բնակավայրերը տուժում էին մերթընդմերթ լարվող վրաց-իրանական հարաբերություններից: Գյուղերի մի մասը թալանվում կամ ավերվում էին հավասարապես թե՛ վրացական, թե՛ պարսկական զորքերի կողմից:

4. Կասրե-Շիրինի հաշտությանը հաջորդած բավականին երկարատև խաղաղության շրջանը բարերար ազդեցություն ունեցավ Հայաստանի համար: Հյուսիսարևելյան Հայաստանի գավառներում այդ ժամանակ առաջացան հայկական մելիքություններ: Տավուշի գավառի Բերդ բնակավայրն ու հարակից գյուղերն ընդգրկված էին Տավուշի մելիքության կազմում: Զակամ գավառի կենտրոնը դարձավ Մեծ Ղարամուրատ գյուղաքաղաքը, որտեղ Աղաբաբի սերունդները խնամիական կապեր հաստատելով մելիք Շահնազարյանների հետ՝ մելիքական իրավունքներ ստացան:

5. Հոգևոր-մշակութային կյանքում նույնպես զգացվեց որոշակի ակտիվություն: Կարգավորվեց հայ Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսության կազմում ընդգրկված Տավուշի ու Զակամի թեմերի գործունեությունը: Դրանցից առաջինի կենտրոնը Խորանաշատն էր, իսկ երկրորդինը՝ նախ Մելիքզադա գյուղը, ապա Գոշավանքը: Ժամանակի ընթացքում գավառների հայ բնակչությունը սկսեց ստվարանալ և նոր եկեղեցիների կառուցման կարիք առաջացավ: Վերանորոգված ու նոր հիմնադրված կրոնական հաստատություններում ստվարացավ հոգևոր դասը: Այս ամենում իրենց գործուն մասնակցությունն ունեցան նշված գավառների թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ առաջնորդները:

6. Շուտով Սեֆյան Իրանում սկսված քաղաքական ու տնտեսական ճգնաժամից շտապեցին օտվել նրա ախոյանները: Թուրքերի դրդմամբ տարածաշրջանում սկսեցին ասպատակություններ իրականացնել լեզգիները: Նրանց արշավանքների հետևանքով մի շարք բնակավայրեր կործանվեցին, իսկ բնակիչները կոտորվեցին կամ գերեվարվեցին: Մեծ կորուստներ կրեցին նաև հոգևոր հաստատությունները: Դրանցից որոշներն ավերվեցին ու թալանվեցին, իսկ սպասավորները կոտորվեցին: Հարավային Կովկասի նկատմամբ սկսեց հետաքրքրություն ցուցաբերել նաև Ռուսաստանը: Վերջինիս համաձայնությամբ Օսմանյան Թուրքիան 1725 թ. նվաճեց Արևելյան Հայաստանը, Վրաստանն ու ամբողջ Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկության տարածքը:

7. 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ում ներառված աշխարհագրի տվյալները կարևոր սկզբնաղբյուր են հյուսիսարևելյան Հայաստանի պատմության, ժողովրդագրության ու տնտեսության ուսումնասիրության համար: Դրանց քննությունը ցույց է տալիս, որ հյուսիսարևելյան Հայաստանում՝ հատկապես նրա բարձրադիր գոտիներում, հայերը բացարձակ մեծամասնություն էին կազմում: Մահմեդական բնակչությունը կենտրոնացել էր ցածրադիր վայրերում: Հյուսիսարևելյան Հայաստանում հաշվառվել են նաև քոչվոր ցեղեր, որոնք մշտական բնակության վայր չունենալով՝ ամռան ամիսներին բարձրացել են Գարդմանի ու Միափորի լեռներ, իսկ ձմեռն անցկացրել Կուր գետի մերձակայքում: Օսմանյան իշխանությունները Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկության տարածքում կիրառել են աննախադեպ կոշտ հարկային քաղաքականություն, ինչն էլ ավելի է վատթարացրել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ի տարբերություն հայերի՝ տեղի եկամուտ մահմեդականներն ավելի նպաստավոր պայմաններում էին գտնվում:

8. Քոչվոր ցեղերի՝ գավառում հայտնվելու հանգամանքը հետագա տասնամյակներում լուրջ ազդեցություն ունեցավ դրանցում ժողովրդագրական

գործընթացների վրա: Հաջորդող տարիներին նրանք սկսեցին հետևողականորեն բնակվել հայերի լքած գյուղերում և աստիճանաբար յուրացնելով ավելի ընդարձակ հողեր՝ նստակեցության անցնելու հող նախապատրաստեցին: Հենց այս եկամուտ ցեղերն էլ այժմ հանդիսանում են ԱՀ բնակչությունն մի հատվածը: Ուստի պատահական չէ, որ ՀՀ Տավուշի մարզի սահմանակից ադրբեջանական բնակավայրերի մեծամասնությունը կրում են 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ում հիշատակված ցեղերի անվանումները:

9. Լուրջ փոփոխությունների ենթարկվեց հայկական տեղանանվանական համակարգը: Դրանց մեծամասնությունը հետզհետե իր տեղը զիջեց նոր թուրքական տեղանուններին:

10. 1727 թ. «Գանձակ-Ղարաբաղի էյալեթի ընդարձակ դաֆթար»-ի տվյալներով, Տավուշ գավառի՝ այժմ ՀՀ Բերդ խոշորացված համայնքը կազմող տարածքն ամբողջությամբ հայաբնակ է եղել: Այնտեղ որևէ մահմեդական բնակավայր նշված ժամանակաշրջանում վկայված չէ: Հարևան Զակամ (Վերին և Ներքին) գավառը որոնք ընդգրկում են միայն բարձրադիր շրջաններ, զուտ հայաբնակ էին:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրատարակություններում.

1. Ա. Եսայան, Թյուրքական ցեղերի բնակեցումը հյուսիսարևելյան Հայաստանում Սեֆյանների օրոք (XVI-XVII դդ.), Բանբեր Մատենադարանի 2019, № 27, էջ 288-296:
2. Ա. Եսայան, Հյուսիսարևելյան Հայաստանի մելիքությունները XVII դարում, Բանբեր Մատենադարանի 2020, № 29, էջ 388-400:
3. Ա. Եսայան, Ժողովրդագրական տեղաշարժերը հյուսիսարևելյան Հայաստանում շահ Աբասի կառավարման շրջանում, Հայագիտության Հարցեր 2020, № 1 (19), էջ 37-49:
4. Ա. Եսայան, Իրավիճակը հյուսիսարևելյան Հայաստանում XVIII դարի առաջին քառորդին, Պատմություն և մշակույթ 2021, № 2, էջ 119-126:
5. Ա. Եսայան, Զակամ գավառը ԺԷ դ. – ԺԸ դ. առաջին քառորդին, Բանբեր Մատենադարանի 2022, № 33, էջ 285-299:
6. Ա. Եսայան, Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքը 17-րդ դարում, Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի 2024, № 1 (13), էջ 8-18:

YESAYAN ANDRANIK ARARAT

TAVUSH AND ZAKAM PROVINCES OF NORTHEASTERN ARMENIA FROM THE XVII CENTURY TO THE FIRST QUARTER OF THE XVIII CENTURY (HISTORICAL-DEMOGRAPHIC STUDY)"

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of «History of Armenia» 07.00.01.

The defense of the dissertation will be held on October 11, 2024, at 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

This dissertation is dedicated to the history and demography of the Tavush and Zakam provinces from the 17th to the early 18th century. It draws on a range of previously unpublished documents and sources to present a reconstruction of this largely unexplored history.

The thesis is comprises of an introduction, four chapters, conclusions, a list of sources and literature consulted. The introduction provides a justification for the topic's relevance, outlines the study's purpose and key issues, details the chronological and territorial scope, specifies the methodology, examines the extent of existing research on the topic, and presents new scientific data.

The initial chapter of the dissertation is titled "THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE LATE 16TH CENTURY AND THE EARLY 17TH CENTURY." This chapter presents an analysis of the Persian-Ottoman wars and their consequences on northeastern Armenia. In this context, the question of whether the Armenian population of Tavush and Zakam was subjected to deportation by Shah Abbas (1587-1629) is discussed in detail. A comprehensive examination of the primary sources indicates that these provinces were not significantly affected by the Shah Abbas deportation. Additionally, the tribes that settled in northeastern Armenia during the Safavid era and their distribution are discussed. This analysis also encompasses the internal movements of the Armenian population, the Turkification of Armenian place names, and other related topics.

The second chapter of the dissertation is entitled "TAVUSH AND ZAKAM PROVINCES IN (1606-1725)". This chapter confirms the long Persian-Ottoman peace and the subsequent transfer of those provinces back to Safavid Iran is presented. Thereafter, with a comprehensive examination of the existing source material, an analysis is provided of the Armenian Melikdoms that were created in those provinces. This chapter then presents the military-political shifts in the region that occurred alongside the decline of Safavid Iran. The raids of the Lezgis, who invaded the region on numerous occasions at

the instigation of Ottoman Turkey, and the massacres and captivity of the Armenian population on that side are examined in detail.

The third chapter is entitled "DEMOGRAPHIC AND ECONOMIC PICTURE OF TAVUSH AND ZAKAM PROVINCES ACCORDING TO THE 1727 EXTENSIVE *DEFTER* OF THE GANJA-KARABAKH EYALET." This section examines the Ottoman archival document in detail and then presents a comprehensive analysis of the population and taxes paid in the Tavus, Akhnji, Hasansu, Asrik, Turganlar, Upper Zakam, and Inner Zakam nahiyehs, which collectively comprise the Tavush and Zakam Provinces. A detailed examination of the individual nahiyes reveals the names of the registered persons and the number of taxes paid in each area. Additionally, the Muslim population of the region and the uninhabited villages are presented separately. A total of 129 settlements were identified within the seven nahiyes that comprise the Tavush and Zakam provinces. The majority of these settlements, 72 villages, were found to be uninhabited and abandoned. Of the remaining 57 villages, 33 were populated by Armenians, while 24 were inhabited by Muslims. The total number of taxpayers in Armenian villages was 693 individuals. In 24 Muslim settlements, 364 taxpayers were registered. Additionally, 334 individuals from various nomadic tribes were identified as nomads in the aforementioned districts.

By examining the types of taxes included in the document, it was possible to gain insight into the general economic situation of the provinces. A significant number of mills were present in the settlements of Tavush and Zakam, with a total of 39 mills identified in the villages inhabited by Armenians.

The dissertation's final chapter, "SPIRITUAL-CULTURAL LIFE IN ZAKAM AND TAVUSH PROVINCES FROM THE 17TH CENTURY TO THE FIRST QUARTER OF THE 18TH CENTURY" presents an analysis of the region's manuscript heritage, church building activities, and the revitalization of spiritual and cultural life. During the lengthy period of Persian-Ottoman peace, the region experienced considerable development. The activities of the dioceses of Zakam and Tavush were regulated, and the spiritual life was revived. The existence of scriptoria in these provinces provides evidence of considerable economic potential, as the copying of manuscripts was a significant expense. The main results of this research are summarized in the conclusions.

ЕСАЯН АНДРАНИК АРАРАТОВИЧ

ПРОВИНЦИИ ТАВУШ И ЗАКАМ СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В XVII - ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XVIII ВВ. (ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 11-го октябрья 2024 г., в 14^{00}, на заседании специализированного совета по Истории Армении 004 КВОН РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена истории и демографии Тавушской и Закамской провинций с XVII-го по начало XVIII-го века. Работа опирается на ряд ранее неопубликованных документов и источников, чтобы представить реконструкцию этого в значительной степени неисследованного раздела истории.

Диссертация состоит из введения, четырёх глав, заключения, списка использованных источников и литературы. Во введении обосновываются актуальность темы, цель и проблематика, хронологический и территориальный охват, методология, новые научные данные, а также рассматривается степень изученности темы.

Первая глава диссертации называется «ПОЛОЖЕНИЕ СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В КОНЦЕ XVI — НАЧАЛЕ XVII ВВ.». В этой главе представлен анализ Персидско-османских войн и их последствий для северо-восточной Армении. В этом контексте рассматривается вопрос о том, подвергалось ли армянское население Тавуша и Закама депортации со стороны шаха Аббаса (1587-1629гг.). Всестороннее изучение первоисточников показывает, что эти провинции не сильно пострадали от депортации шаха Аббаса. Кроме того, рассматриваются племена, поселившиеся на северо-востоке Армении в эпоху Сефевидов и их распространение. Этот анализ также охватывает внутренние миграции групп армянского населения, тюркизацию армянских топонимов и другие смежные темы.

Вторая глава диссертации озаглавлена «ПРОВИНЦИИ ТАВУШ И ЗАКАМ В (1606-1725 гг.)». В этой главе представлено подтверждение длительного Персидско-османского мира и последующее возвращение этих провинций Сефевидскому Ирану. Далее, с всесторонним рассмотрением имеющейся литературы, даётся аналитический обзор армянских меликств, учреждённых в этих провинциях. Затем представлены военно-политические сдвиги в регионе, которые неоднократно происходили вместе с упадком Сефевидского Ирана. Рассмотрены

набеги лезгин, вторгшихся в регион по наущению Османской Турции, резня ими и пленение армянского населения.

Третья глава называется «ДЕМОГРАФИЧЕСКАЯ И ЭКОНОМИЧЕСКАЯ КАРТИНА ТАВУШСКОЙ И ЗАКАМСКОЙ ПРОВИНЦИЙ, ПО ДАННЫМ ОСМАНСКОГО ПРОСТРАННОГО РЕЕСТРА ГЯНДЖИНСКО-КАРАБАХСКОГО ЭЯЛЕТА В 1727 ГОДУ». В этом разделе подробно рассматривается османский архивный документ, а после этого производится всесторонний анализ состава населения и налогообложения в округах Тавуш, Ахнджи, Хасансу, Асрик, Турганлар, Верхний Закам и Нижний Закам, которые составляют провинции Тавуш и Закам. Детальное изучение персон (налогоплательщики) зарегистрированных лиц и количество налогов, уплачиваемых в каждом округе. Кроме того, мусульманское население региона и обезлюженные деревни представлены отдельно. Всего было выявлено 129 поселений в семи округах, которые составляют провинции Тавуш и Закам. Большинство из этих поселений, 72 деревни, оказались необитаемыми и заброшенными. Из оставшихся 57 деревень 33 были населены армянами, а 24 — мусульманами. Общее число налогоплательщиков в армянских деревнях составило 693 человека. В 24 мусульманских поселениях было зарегистрировано 364 налогоплательщика. Помимо того, 334 человека из различных кочевых племён были идентифицированы как кочевники в вышеупомянутых районах. Изучив виды налогов, включённых в документ, можно получить представление об общем экономическом положении провинций. Значительное количество мельниц наличествовало в поселениях Тавуш и Закам, при этом в деревнях, населённых армянами, было выявлено в общей сложности 39 мельниц.

Заключительная глава диссертации «ДУХОВНО-КУЛЬТУРНАЯ ЖИЗНЬ В ПРОВИНЦИЯХ ЗАКАМ И ТАВУШ С XVII-го ДО ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XVIII-го ВВ.» представляет собой анализ рукописного наследия региона, церковного строительства и возрождения духовной и культурной жизни. В течение длительного периода Персидско-османского мира регион пережил значительное развитие. Деятельность епархий Закама и Тавуша была урегулирована, и духовная жизнь возродилась. Существование скрипториев в этих провинциях свидетельствует о значительном экономическом потенциале, поскольку копирование рукописей было немалым расходом.

Основные результаты этого исследования обобщены в выводах.